Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՐԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

XIX դարի վերջին քառորդին իմպերիալիստական երկրներն է՛լ ավելի ամրապնդեցին իրենց տնտեսական և քաղաքական դիրքերն Իրանում։

Օտարերկրյա կապիտալի ինտենսիվ ներթափանցումը, օտարերկրյա բանկերի հիմնադրումը, շահի և կառավարության՝ օտար պետություններից վերցրած պարտքերը, բազմաթիվ կոնցեսիաների շնորհումը և, այդ ամենի հետևանքով երկրի վերածումը կիսագաղութի է՛լ ավելի վատթարացրին իրանական ժողովրդի առանց այն էլ ծանր վիճակը, ուժեղացրին դասակարգային շահագործումը, ժողովրդական զանգվածների դժգոհությունն ու դիմադրությունը և նախապայմաններ ստեղծեցին 1905—1911 թթ. հեղափոխության համար։

Նասր էդ Դին շահի թագավորության տարիներին (1848—1896) մեծ թափ ստացան ժողովրդական շարժումները, որոնց մասնակցում էին ամենատարբեր դասակարգերն ու խավերը (արհեստավորները, քաղաքային չքավորությունը, գյուղացիությունը, զինվորականությունը)։

Բազմաթիվ տեղեկություններ կան այդ շրջանում գործող գաղտնի կազմակերպությունների գործունեության մասին, որոնք ժողովրդին կոչ էին անում պայքարել օտարերկրացիներին կոնցեսիաներ տալու դեմ։ Օրինակ, հայտնի է, որ Թեհրանում մի շարք ականավոր դեմքեր հավաքվում էին քաղաքական գործիչ միրզա Յահյա Դովլաթաբադիի տանը և գաղտնի նիստեր գումարում։ Այդ կազմակերպության անդամները ժողովրդին բացատրում էին Իրանի համար օտարերկրյա պարտքերի կործանարար նշանակությունը, Ռուսաստանից վերցրած պարտքի դեմ բողոքող հոդվածներ էին ուղարկում արտասահմանյան մամուլին և նման բովանդակությամբ հեռագրեր հղում տարբեր երկրների արտաքին

գործերի մինիստրներին։ Այդ կազմակերպությունը միաժամանակ գաղտնի թռուցիկներ էր տարածում, որոնք հայտնի էին «շարնամե» անունով։ Դրանցում խոսվում էր պետական պարտքի քաղաքական և տնտեսական վնասների մասին և մատնանշվում էին այն վտանգները, որ այն կարող էր ունենալ Իրանի համար։ Այդ թերթիկներում հայտնվում էր, որ պալատականները և կառավարության ղեկավարներն իրենց անձնական շահերից ելնելով ուզում են երկիրը ծախել օտարերկրացիներին և Իրանի ժողովրդին խաղատիկնիկ դարձնել ռուսների ձեռքում[1]։

1901 թ. օգոստոսի վերջերին Թեհրանում տեղի ունեցան դժգոհության նոր ցույցեր՝ ուղղված բելգիական մաքսային պաշտոնյաների կողմից սահմանված սակացուցակների դեմ, որոնց հետևանքով անհրաժեշտ սննդամթերքի գները բարձրացել էին[2]։

Փաստերը ցույց են տալիս, որ դարավերջին Իրանն ապրում էր քաղաքական և տնտեսական լուրջ ճգնաժամ։ Ծավալվող այդ շարժումների մասին տեղեկություններ էին տպագրվում նաև եվրոպական մամուլում։ Օրինակ՝ «Քոլնիշե ցայտունդ» թերթը 1901 թ. օգոստոսի 31-ի համարում հաղորդում էր, որ Իրանում ծայր է առել հեղափոխական ընդարձակ շարժում, որի պատճառը կառավարության նկատմամբ եղած աճող դժգոհությունն է և, հատկապես, նոր պարտք վերցնելու համար Ռուսաստանի հետ սկսվելիք բանակցությունները։ Թերթի վկայությամբ, շահն իր գրասեղանի վրա շարունակ սպառնալից նամակների էր հանդիպում։ Այդ նամակները հատկապես ուղղված էին Ամին էս Սոլթան մեծ վեզիրի դեմ, որը մեղադրվում էր իր հայրենիքը ծախելու և բարենորոգումներ շանցկացնելու մեջ[3]։

Անգլիական «Թայմս» թերթը 1904 թ. հունվարի 29-ին հայտնում էր, որ Պետերբուրգից ստացված հաղորդագրությունների համաձայն Թեհրանում պարսկերեն լեզվով մի շարք թռուցիկներ են տարածվել, որոնք պարսիկներին զգուշացնում են Իրանը Հնդկաստանի վիճակին իջեցնելու Անգլիայի մտադրության մասին[4]։

Իրանում դեմոկրատական շարժման վերելքին նպաստող շատ կարևոր գործոն էին Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական խմորումները։ Ռուս-ճապոնական պատերազմում ցարական Ռուսաստանի

---

[1] مهدی ملکزاده تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۱۳۷

[2] E. Browne, A Brief Harrative of Recent Events in Persia, London, 1909, p. 9

[3] *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909, Cambridge, 1910, p. 10.

[4] Նույն տեղում, էջ 109։

պարտության և Ռուսաստանում ծավալվող հեղափոխական շարժումների ազդեցությունը Իրանում տեղի ունեցող իրադարձությունների վրա, չեն կարող ժխտել նաև արևմտաեվրոպական հեղինակները։ Օրինակ, Բրաունն իր աշխատությունում մեջբերում է ականատեսներից մեկի հետևյալ խոսքերը. «Ինձ թվում է, որ Արևելքում ինչ-որ փոփոխություն է սպասվում։ Ճապոնիայի հաղթանակն, ըստ երևույթին, նշանակալի ազդեցություն է ունեցել ամբողջ Արևելքում։ Նույնիսկ այստեղ՝ Իրանում, դա (հեղափոխական շարժումը—Հ. Ե.) առանց ազդեցության չի եղել... Իրանում, շնորհիվ նրա մոտիկությանը Ռուսաստանին, զարթոնքը կարծես ընդունում է դեմոկրատական ռեֆորմների շարժման ձև...։

Գուցե Արևելքն իսկապես արթնանում է իր դարավոր քնից և մենք շուտով վկա կլինենք այս համբերատար միլիոնների ոտքի ելնելուն՝ ընդդեմ ոչ մի միջոցի առաջ կանգ չառնող Արևմուտքի շահագործմանը»[5]։

Բնական է, որ իշխող խավերի ներկայացուցիչների մեծ մասը դեմ էր որևէ բարեփոխման, քանի որ կկորցներ իր հսկայական ապօրինի եկամուտները և արտոնյալ վիճակը։ Մյուս կողմից, նման բարեփոխումներին հակառակ էր Իրանում օրեցօր իր դիրքերն ամրապնդող օտարերկրյա կապիտալը՝ Իրանի ներքին գործերին միշամտող և գնալով իրենց ազդեցությունն ուժեղացնող ցարական Ռուսաստանը և իմպերիալիստական Անգլիան։ Դրա լավագույն ապացույցներից մեկը հենց այն բացասական վերաբերմունքն էր, որ Անգլիան և Ռուսաստանը ցուցաբերեցին Ամիր Քաբիրի բարենորոգումների նկատմամբ։

Վերոհիշյալ հանգամանքները է՛լ ավելի սրեցին ու խորացրին Իրանի դասակարգային և սոցիալական հակասությունները, որոնց հետևանքով երկրում ծայր առավ լուսավորչական շարժումը։

* *
*

Լուսավորչական շարժումն Իրանում ծավալվեց և հատկապես մեծ թափ ստացավ XIX դարի վերջին քառորդին։ Անշուշտ, այդ շարժումն ուներ իր յուրահատկությունները, որոնք բխում էին երկրի քաղաքական և տնտեսական կյանքի բնույթից։

Այդ շրջանի իրանական լուսավորիչների գործունեությունը գնահատելիս պետք է, նախ և առաջ, նկատի ունենալ, որ նրանք աշխատում էին ազատագրական և դեմոկրատական գաղափարները կիրառել երկրի

[5] Նույն տեղում, էջ 123։

սոցիալ-քաղաքական ամենաբարդ խնդիրները լուծելու համար և ջանում էին ժողովրդին ձերբազատել ֆեոդալական բռնապետական կարգերի նկատմամբ հնազանդություն և հանդուրժողականություն քարոզող գաղափարներից։

Լուսավորիչների հասարակական-քաղաքական գործունեությունն իր սուր ծայրով ուղղված էր նաև Իրանում իմպերիալիստական տերությունների գաղութարարական քաղաքականության և իրենց գործունեությամբ այդ քաղաքականության իրականացմանը նպաստող իշխող խավերի դեմ։ Գաղութատիրության հարատևման կարևոր ազդակներից մեկը նրանք համարում էին Իրանի քաղաքական և տնտեսական հետամնացությունը և ջանում էին միջոցներ գտնել երկիրն այդ վիճակից դուրս բերելու համար։ Ըստ նրանց, փրկության հիմնական ուղին պետական կառուցվածքի փոփոխումն էր և գիտության ու լուսավորության զարգացումն ու տարածումը։

Լուսավորիչները մեծ հայրենասերներ էին։ Նրանց հայրենասիրությունն անքակտելիորեն զուգորդվում էր Իրանի անկախության և ազգային ամբողջականության գաղափարի հետ։ Նրանք քարոզում էին սիրել ժողովրդին, հարգել և պահպանել ազգային ավանդներն ու սովորությունները, ջանում էին ժողովրդի մեջ արթնացնել հայրենասիրական զգացմունքներ, իսկ հայրենիքի պաշտպանությունը համարում էին յուրաքանչյուր իրանցու սրբազան գործը։

Անհրաժեշտ է ընդգծել, որ XIX դարի վերջի իրանական լուսավորիչների ազգայնական գաղափարախոսությունն արմատապես տարբերվում էր հետագայում զարգացած պանիրանական կամ պանիսլամական գաղափարախոսությունից։

Արտահայտելով ազգային բուրժուազիայի շահերը, լուսավորիչները մերկացնում էին կոմպրադորական բուրժուազիայի գործունեությունը և ժողովրդին կոչ էին անում պայքարել օտարերկրյա շահագործողների և երկրի ներսում նրանց գործակալների դեմ։

Իրանական լուսավորիչների հայացքներում ուրույն տեղ է գրավում երկրի տնտեսական զարգացման հարցը։ Նրանք համոզված էին, որ միայն երկրի տնտեսության, հատկապես ազգային արդյունաբերության զարգացումը, կարող է հասարակական առաջադիմության և ազատագրման երաշխիք հանդիսանալ։

Ի տարբերություն պանիսլամիզմի գաղափարախոսների, որոնք Իրանը գոյություն ունեցող անմխիթար վիճակից դուրս բերելու միակ միջոց էին համարում վերադարձ նախնական, անաղարտ իսլամին և

մուսուլման ժողովուրդների անջատումը քրիստոնեությունից, լուսավորիչները ելքը տեսնում էին Իրանում գիտությունը և նորագույն տեխնիկան կիրառելու և տարածելու, ինչպես նաև առաջավոր երկրներից կատարելագործված ձևեր ընդօրինակելու մեջ:

Լուսավորիչների այս գաղափարները լայնորեն արտացոլվում էին արտասահմանյան տարբեր երկրներում հրատարակվող պարսկական թերթերում:

Ֆիրուզ Դավարը Բոմբեյում լույս տեսած իր «Իրանը և նրա մշակույթը» աշխատության մեջ գրում է. «Իրանական գրականության ոգին հեղափոխականացնելու... զանգվածների մեջ քաղաքական հարցերի շուրջ հետաքրքրություն արթնացնելու պատիվը, ըստ արժանվույն, պետք է վերագրել մամուլին: Մամուլի միջոցով էր, որ իրանցիները գիտակցեցին, որ իրենք ամբոխ են եղել և շահագործվել են իրենց ղեկավարների և նրանց գլխին կանգնած երկու եվրոպական երկրների կողմից: ...Կարճ ասած, իրանական մամուլը առաջնորդող դեր էր խաղում երկրի սոցիալական, քաղաքական և մտավոր զարթոնքի գործում»[6]:

Իրանում մեծ տարածում և ազդեցություն ուներ «Հաբլ օլ մաթին» թերթը, որը հրատարակվում էր Կալկաթայում՝ 1893 թվականից սկսած: Թերթը հանդես էր գալիս օտարերկրյա պարտքերի դեմ և ցույց էր տալիս երկրի համար նրանց քայքայիչ հետևանքները:

Մալեքզադեն գրում է. «Հաբլ օլ մաթին» թերթը ավելի քան երեսուն տարվա ընթացքում հանդիսանում էր նոր գաղափարների տարածող, բազմաթիվ ազատասերներ և օրենքի իշխանության կողմնակիցներ թերթի միջոցով իրենց տեսակետներն էին արտահայտում և դրանք հասարակության սեփականությունը դարձնում: Այդ թերթի միջոցով բռնապետության տակ հեծող ժողովուրդն իր ձայնն էր հասցնում ամբողջ աշխարհին»[7]:

Քասրավին գտնում է, որ «Հաբլ օլ մաթին» թերթն այդ ժամանակվա ամենաճանաչված թերթերից էր: Այն նյութեր էր հրապարակում Իրանի քաղաքական դժվարությունների մասին: Նրա էջերում սուր քննադատական հոդվածներ լույս տեսան, հատկապես, Ռուսաստանից պարտք վերցնելու ժամանակ: Քասրավիի կարծիքով, հենց այդ էր պատճառը, որ մոտ չորս տարի արգելված էր այդ թերթի մուտքն Իրան[8]:

---

[6] *J. C. Davar*, Iran and Its Culture, Bombay, 1953, p. 428.

[7] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۳۴۳

[8] احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران صفحه ۴۲

1907 թ. ապրիլի 29-ին Թեհրանում լույս տեսած «Հաբլ օլ մաթին» թերթի հենց առաջին համարում, անդրադառնալով Կալկաթայում լույս տեսնող համանուն թերթի գործունեությանը, ասվում է, որ «Հաբլ օլ մաթինը» տասնչորս տարի շարունակ քարոզել է Իրանի ժողովրդի և պետության ազատագրումը օտարերկրացիներից, արդարության և սահմանադրության հիմունքների հաստատումը, բռնապետության ու բռնության վերացումը...։ Թերթի այս համարում քաղվածքներ են բերված «Էրշադ» թերթի մի հոդվածից, որտեղ բռնապետական կարգերի տապալման միակ ուղին զինված ապստամբությունն ու հեղափոխությունն է համարվում և միաժամանակ, արծարծվում են ռուս-ճապոնական պատերազմի և ռուսական 1905 թ. հեղափոխության ազդեցության հարցերը։ «Օտար երկրները և Իրանի կառավարությունը չպետք է մոռանան, —գրված է հոդվածում,— որ Ճապոնիայի հաղթանակը և Ռուսաստանում ծավալված ազատագրական շարժումը ազդել են ողջ աշխարհի վրա և բացել բոլոր ժողովուրդների աչքերը»[9]։

Թերթն իր համարներից մեկում հավաստիացնում էր Իրանի ժողովրդին, որ օտար երկրներից հատկապես Ռուսաստանն ու Անգլիան ամենևին շահագրգռված չեն Իրանի զարգացման, շենության և առավելապես նրա ազատության ապահովմամբ, այլ, ընդհակառակը, նրանց ցանկությունն է Իրանը միշտ իրենց ձեռքում պահել[10]։

Ավելի քան 20 տարի Ստամբուլում լույս էր տեսնում «Ախթար» թերթը, որը հիմնադրվել էր 1875 թվականին։ Թերթը հատկապես լայն տարածում գտավ ծխախոտի կոնցեսիայի դեմ մղվող պայքարի տարիներին։ Նրա էջերում լույս էին տեսնում տնտեսական բնույթի հոդվածներ, որոնք ցույց էին տալիս Իրանի քայքայված վիճակը և խիստ քննադատության ենթարկում կառավարության քաղաքականությունը։

Լուսավորչական գաղափարներ տարածող ամենախոշոր թերթը, իհարկե, «Ղանունն» էր, որին մանրամասն կանդրադառնանք նրա խմբագիր Մալքոմ խանի մասին խոսելիս։

Իրանական լուսավորիչների աչքի ընկնող ներկայացուցիչներից էր Աբդ օլ Ռահիմ Աբու Թալեբը, որը պատմագրության մեջ հայտնի է Թալեբով անունով։

Բեհզադը գրում է, որ Աբու Թալեբի գրավոր ելույթները, նրա ստեղծագործությունները, Իրանի ժողովրդի արթնացման գործում արտակարգ դեր են ունեցել[11]։

---

9 روزنامه حبل المتين تهران ۱۹۰۷ شماره ۱ اوریل ۲۹

10 Նույն տեղում, № 7։

11 کریم بهزاد قیام آذربایجان در انقلاب مشروطیت ایران تهران صفحه ۳۰

Իր ստեղծագործություններում նա առաջ էր քաշում սահմանադրության, անձի, խոսքի, մամուլի, ժողովների ազատության, օտարերկրյա պարտքերից և առանց ժողովրդի համաձայնության կոնցեսիաներ տալուց հրաժարվելու և այլ հարցեր։

Աբու Թալեբի գրած «Քեթաբե Ահմադ յա սաֆինեյե Թալեբի» գիրքը հրատարակվեց 1890 թ. և մեծ տարածում գտավ։ Աբու Թալեբը իր գրքում հատուկ կերպով բնորոշում էր արևմտյան գաղութատիրական պետությունների էությունն ու դերը, և իր հայրենակիցներին զգուշացնում, որ գործիք չդառնան նրանց ձեռքին։ Նա գրում էր. «Քաղաքակիրթ և լավ արտաքին ունեցող արևմուտքի հարուստներից շատերը դաշտային մկների պես շրջում են աշխարհով մեկ և որտեղ հարստության սերմերի նոր կուտակումներ են գտնում, հրավիրում են իրենց ուղեկիցներին, որպեսզի աղվեսային խորամանկությամբ ներթափանցեն այնտեղ և ինչ որ կա կամ ինչ հարյուր տարի հետո է լինելու, կարճ ժամանակում, անխղճորեն կլանեն։ Դրանից հետո նրանք մարդկային կերպարանք են ընդունում, ուրիշների իրավունքների, ազատության և հավասարության մասին են խոսում և վիճելի հարցերի լուծման ու կարգավորման գործը վերապահում իրենց ուժին և ուրիշների թուլությանը»[12]։

Աբու Թալեբն այնուհետև եզրակացնում է. «Այն ժողովուրդը, որի ազդեցիկ ղեկավարները դյուրահավատ, տգետ, անփորձ և փողասեր են, բոլորից շուտ կընկնի ստեուլինգի, ռուբլու, դոլլարի և ֆրանկի հզոր բազեի ճանկը»[13]։

Աբու Թալեբը դեմ էր նաև պատերազմին և կոչ էր անում ռազմական ծախսերի և անիմաստ արկածախնդրությունների համար հսկայական միջոցներ չվատնել։ Նա գրում էր. «Արդյո՞ք մեր և ուրիշների հայրենիքը նրա համար է, որ ամբողջ բնակչությունը սուր, հրացան և նիզակ կրի, ռազմական գիտելիքներին ընտելանա, դպրոցներում գիտության և քաղաքակրթության փոխարեն դաժանություն և վայրենություն սովորի։ Երիտասարդներին, որոնք սկզբից ևեթ պետք է հանրօգուտ գործունեությամբ, հողագործությամբ ու վարուցանքով զբաղվեն, իրենց և հարազատների ապրուստը բարելավեն, քաղաքակրթություն տարածեն, զորանոցներում անհոգի մեքենաների պես մարդասպանություն են սովորեցնում, ժողովրդական հարստությունից գումարներ են ծախսում, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանց օգտագործեն իրենց անձ-

---

[12] عبدالرحيم ابن ابو طالب، سفينه طالبي يا كتاب احمد صفحه ۲۲۷

[13] Նույն տեղում։

նական նպատակներին աշխարհակալության, երկրների ավերման, շինությունները քանդելու և յուր նմանների սպանության համար»[14]։

Նա հայտարարում էր, որ քաղաքակրթության զարգացման, լուսավորության տարածման և օրենքի հաստատման պայմաններում կվերանան այդ վայրագությունները, կգումարվեն այնպիսի կոնգրեսներ, որոնց կմասնակցեն բոլոր ժողովուրդների և ցեղերի ներկայացուցիչները և միջազգային վիճելի հարցերը կլուծվեն ամենայն արդարությամբ։ «Ահա այդ ժամանակ է,—եզրակացնում է Աբու Թալեբը,—որ զորանոցներում սպանության և ավերածության կարգադրության սպասող հարյուր հազարավոր զինվորներ կօգտագործվեն բարիքներ ստեղծելու և անապատները մշակելի դարձնելու համար»[15]։

«Մասաել օլ հայաթ» գրքում Աբու Թալեբը, հատկապես Իրանը Անգլիայի և Ռուսաստանի միջև ազդեցության գոտիների բաժանելու կապակցությամբ, մերկացնում է իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունն Իրանում և ցույց է տալիս Իրանի իշխող շրջանների դավաճանությունն ու անտարբերությունը։

Աբու Թալեբը անդրադառնում է Նասր էդ Դին շահի և Մոզաֆար էդ Դին շահի Եվրոպա կատարած ճամփորդություններին և այդ առիթով օտար պետություններից վերցրած հսկայական պարտքերի հարցին։ Նա հեգնանքով գրում է, որ թագավորների ճամփորդության ժամանակ կատարված ծախսերը իզուր չանցան, քանի որ կառուցվեցին հոյակապ պալատներ, ընդարձակ մայրուղիներ, քարե դարպասներ, գեղատեսիլ այգիներ, թանկարժեք հայելիներով շքեղ հյուրասրահներ, որոնք զարմանք են պատճառում նույնիսկ օտարերկրյա դեսպաններին։ «Մինչդեռ,—գրում է հեղինակը,—այդ բոլորը հենց նրանց (եվրոպական երկրների—Հ. Ե.) գործարաններին էին պատվիրել»[16]։

Աբու Թալեբը բողոքում է նաև օտարերկրյա իմպերիալիստների՝ Իրանի նկատմամբ կիրառած քաղաքականության դեմ։ Այդ քաղաքականությունը բնորոշելու համար նա բերում է հետևյալ օրինակը. Դամավանդ լեռան գագաթը բարձրացած խումբը վերադառնում է Թեհրան և հանդիպում ունենում մինիստրի հետ։ Մինիստրը խոստովանում է, որ Անգլիայի դեսպանի պահանջով է նրանց Դամավանդ ուղարկել։ «Անգլիայի դեսպանը մեր դրամով և ձեր ջանքերով ուզում էր բրիտանական

---

[14] Նույն տեղում, էջ 143։

[15] Նույն տեղում, էջ 144։

[16] عبدالرحيم ابن شيخ ابوطالب مسالك المحسنين قاهره ١٣٢٣ ص ١٥

աշխարհագրական ընկերությանը ծառայություն մատուցել...,—ասում է նա։ Մեր հարևանների՝ Ռուսաստանի և Անգլիայի, ձեռքից կրակն ենք ընկել... ամեն օր մի նոր բան են պահանջում և չընդունելու դեպքում սպառնում են մինիստրներին հեռացնել։ Դա շատ վճռական զենք է, ... եկեք մտածենք, թե ինչպես այս փորձանքը մեր և մեր սերունդների գլխից հեռացնենք»[17]։

Իրանական հեղափոխական դեմոկրատիզմի լավագույն ներկայացուցիչներից է Մալեք օլ Մոթաքալեմինը։ Նրա աշխատություններում պարզորոշ կերպով նկատելի են հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական տրամադրությունները։

Երբ Իրանում ցարական Ռուսաստանից նոր պարտք վերցնելու հարց էր առաջացել, և հայրենասիրական ու առաջադիմական խավերը ոտքի էին ելել ի պաշտպանություն երկրի շահերի ու անկախության, Մալեք օլ Մոթաքալեմինը ևս մեծ շանքեր թափեց խափանելու իշխող շրջանների այդ դավաճանությունն ու հայրենավաճառությունը։

Մեծ էր Մալեք օլ Մոթաքալեմինի վրդովմունքը օտարերկրյա ստրկացուցիչ պարտքերի նկատմամբ։ Նոր պարտքեր վերցնելու բանակցությունների ժամանակ նա մի նամակ է գրում արտաքին գործերի մինիստրը Միրզա Նասրոլլախան Մոշիր էդ Դոլեին և հայտնում է իր կարծիքը այդ մասին։

Բերենք որոշ հատվածներ այդ նամակից։ «Այս օրերին տեղական շրջաններում և արտասահմանյան մամուլում,—գրում է նա,—խոսվում է Ռուսաստանից նոր պարտք վերցնելու մասին։ Այժմ հաստատվում է, որ իսկապես Իրանի կառավարությունը երկրի ամբողջականության և անկախության հետ անհամատեղելի ծանր բեռ է դնում Իրանի ժողովրդի ուսերին, որի տակից նա երբեք ի վիճակի չի լինի դուրս գալ։

Կառավարության եկամուտների ու ծախսերի բալանսը և այն դեֆիցիտը, որ ամեն տարի առաջանում է բյուջեում, թույլ չեն տա, որ կառավարությունը մոտ ապագայում մուծի պարտքի ժամկետավճարները, և այս ստրկացուցիչ լուծը մշտապես կծանրանա Իրանի ժողովրդի վզին։

Իրանի ներքին դրությանը լավատեղյակ և խոհեմ մարդիկ գիտեն, որ նույնիսկ, եթե վստահություն լիներ, որ այդ դրամը կծառայեր բարեփոխությունների և երկրի տնտեսությունը զարգացնելու նպատակին, դարձյալ երկրի շահերի տեսակետից նպատակահարմար չէր այդ քայլին դիմելը։ ...Այդ պարտքը բացի վարկաբեկումից, դժբախտությունից և

---

[17] Նույն տեղում, էջ 248։

ափսոսանքից Իրանի ժողովրդի համար ուրիշ հետևանքներ չի ունենա»[18]։

Նամակի բովանդակությունը ցույց է տալիս, որ Մալեք օլ Մութաքալեմինը գիտակցում էր օտարերկրյա պարտքերի ստրկացուցիչ բնույթը, և վճռական կերպով հանդես էր գալիս դրանց դեմ։ Նա գտնում էր, որ առկա քաղաքական պայմաններում հնարավոր չէ երկրի տնտեսական քայքայված վիճակը կարգավորել օտարերկրյա պարտքերի միջոցով, և այդ նպատակի համար պետք է օգտագործել ներքին աղբյուրները։

Մալեք օլ Մութաքալեմինը Հնդկաստանում հրատարակել է «Մեն ալ խալզ ալ ալհաղ» (Ժողովրդի միջոցով դեպի ճշմարտություն) վերնագրով մի գիրք, որտեղ խոսում է ոչ միայն իրանական, այլև հնդիկ ժողովրդի ճակատագրի մասին։ Գրքում կարմիր թելի պես անցնում են նրա հումանիստական-դեմոկրատական ձգտումները։ Հիշյալ ժողովուրդների դժբախտության պատճառը նա, իրավացիորեն, տեսնում է ֆեոդալական կարգերի պահպանման և օտարերկրյա իմպերիալիզմի ստրկացուցիչ քաղաքականության մեջ և հանգում է այն մտքին, որ միակ փրկությունը ֆեոդալական և իմպերիալիստական լծի թոթափումն է և դեմոկրատական ու անկախ պետության ստեղծումը։ Նա գտնում է, որ պատմական զարգացման հիմնական առանցքը և պատմության շարժիչ ուժը ոչ այլ ոք է, քան ժողովուրդը, և հենց նա էլ պետք է տապալի այդ երկակի լուծը։

Իրանի լուսավորիչների շարքին է դասվում նաև Զեյն օլ Արեգին Մարաղեին՝ «Էբրահիմ բեկի ճանապարհորդական հուշերը» (Սիահաթնամե)[19] գրքի հեղինակը։

Այս գրքի՝ Կալկաթայում հրատարակված օրինակի անգլերեն ամփոփման մեջ հիշատակվում է Մարաղեիի մահվանից առաջ հրատարակչությանը ուղղված նամակից մի հատված, որտեղ նա նշում է, որ «Սիահաթնամեն» գրելիս նպատակ է ունեցել իր հայրենակիցներին ոտքի հանել, ցույց տալով այն անմխիթար վիճակը, որ տիրում էր երկրի բոլոր պետական հիմնարկներում»[20]։ Սայիդ Նաֆիսին իր «Ժամանակակից պարսից արձակի գլուխգործոցները» գրքում այն կարծիքն է հայտնում, որ «Սիահաթնամեն» մեծապես նպաստել է Իրանում հայրե-

---

18 ابراهیم تیموری، عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران ۱۳۳۲ صفحه ۳۸۷

19 زین العابدین مراغه‌ای سیاحت‌نامه ابراهیم بگ چاپ کلکته ۱۹۱۰

20 Նույն տեղում, էջ 253։

նասիրական զգացմունքների վերելքին[21]։ Մարաղեին Իրանի ղեկավարներին ներկայացնում է որպես ժողովրդի ճակատագրի նկատմամբ բացարձակապես անտարբեր մարդիկ, որոնք մտահոգված են միայն իրենց անձնական դիրքի, պաշտոնի և եկամուտների ապահովմամբ, և այդ նպատակի համար չեն խուսափում մինչև իսկ ամենաստոր արարքներից։

Շարունակելով Ախունդովի, ինչպես նաև Մալքոմի առաջադեմ ավանդույթները, Մարաղեին անողոքաբար խարազանում է Իրանում տիրող հասարակական և պետական կարգի արատները։ Իրանի անմխիթար վիճակն ընդգծելու նպատակով Մարաղեին անդրադառնում է Իրանի երբեմնի հզորությանը։ «Իրանը, որը մի ժամանակ եղել է ամբողջ աշխարհի ծաղկուն այգին, այժմ դարձել է ավերակ ու ամայի, իսկ նրա ժողովուրդը, որն անցյալում աշխարհի ամենահարգարժան ժողովուրդներից մեկն էր, այսօր արհամարհված է և ողորմելի»,—գրում է նա[22]։

Մարաղեիի հերոսը թյուրիմացաբար կարծում է, թե մինիստրներն ու մյուս ղեկավարները տեղյակ չեն երկրում տիրող դրությանը, և որ անհրաժեշտ է նրանց ցույց տալ գոյություն ունեցող թերությունները։ Այս մտայնությամբ նա դիմում է վեզիրներին, հուսալով, որ նրանք միջոցներ կձեռնարկեն զարգացնելու ազգային արդյունաբերությունն ու առևտուրը և կսահմանափակեն օտարերկրյա կապիտալի ներթափանցումն Իրան։

Ժողովրդի թշվառության համար Մարաղեին մեղադրում է երկրի ղեկավարներին, որոնք ոչ միայն չէին հոգում նրա բարեկեցության մասին, այլև դաժանորեն ճնշում և հարստահարում էին նրան, որի հետևանքով հարյուրավոր ու հազարավոր իրանցիներ հարկադրված էին աշխատանք որոնելու համար հեռանալ իրենց հայրենիքից։

Լուսավորիչ Մարաղեին մեծ վրդովմունքով է խոսում Իրանի ներքին կյանքին օտարերկրյա գաղութարարների միջամտության մասին. «Մինչև ե՞րբ պետք է օտարերկրյա հյուպատոսները մեր երկրում օգտվեն անսահմանափակ իշխանությունից»,—հարցնում է նա[23]։ Մարաղեին զայրույթով դատապարտում է Իրանն ազդեցության ոլորտի բաժանելու իմպերիալիստական երկրների ձգտումը։ Նա գրում է. «Մի կողմից մեզ մոտ են գալիս գերմանացիները, մյուս կողմից ամերիկացի-

---

21 سعید نفیسی شاهکارهای نثر فارسی معاصر جلد اول تهران ۱۳۳۰ صفحه ۲۱

22 Նույն տեղում, էջ 2։

23 Նույն տեղում, էջ 76։

ները. դպրոցներ են բացում, հյուպատոսներ նշանակում, երաշխիք չկա, որ վաղն էլ նապոնական նավերը չեն ներխուժի Պարսից ծոցը և նման արտոնություններ չեն ստանա»[24]։

Իրանում կուլտուր-լուսավորչական շարժման առավել ռադիկալ թևի ներկայացուցիչ էր Մալքոմը։ Նրա հիմնական նպատակն էր օգնել իրանական ժողովրդին ազատագրվել բռնապետական կարգերից։

Մալեք զադեն, խոսելով Մալքոմի պատմական դերի մասին, գրում է. «Բռնապետության շրջանի գործիչներից միրզա Մալքոմ խանը, ավելի քան որևէ մեկը, ջանացել է ժողովրդին ծանոթացնել համաշխարհային քաղաքակրթությանը, օրենքի օգուտներին, ժողովրդական իշխանության առավելություններին։ Ժողովրդին լուսավորելու և սահմանադրություն ձեռք բերելու գործում մեծ է եղել նրա գաղափարների ազդեցությունը»[25]։

«Իրանի սահմանադրության պատմությունը» աշխատության հեղինակ Ահմադ Քասրավին Մալքոմին դասում է այն մարդկանց շարքը, որոնք «նասր էդ Դին շահի օրոք սրտցավություն են երևան բերել ժողովրդի և երկրի նկատմամբ և ջանքեր են թափել ժողովրդի զարթոնքի ուղղությամբ»։ Նա գտնում է, որ «Մալքոմը Նասր էդ Դին շահի ինքնակալության և Ամին էս Սոլթանի եսասիրության ու անազնվության թշնամին էր, դժգոհ էր օտարերկրացիներին կոնցեսիաներ տալուց և բացահայտել է դրանց վնասները»[26]։

Մալեք զադեն հետաքրքիր փաստեր է հաղորդում Ռուսաստանից 22,5 միլիոն ռուբլի պարտք վերցնելու հարցի նկատմամբ Մալքոմի վերաբերմունքի մասին։

Հեղինակը նշում է, որ չնայած այդ պարտքի դեմ երկրի ազատասերների բողոքին և կառավարող շրջանների համար նրա վնասակարությունն ու վտանգավորությունը բացահայտելու վերջիններիս ջանքերին, այնուամենայնիվ, «միակ մարդը, որ դուրս եկավ այդ ստոր արարքի դեմ, Լոնդոնում Իրանի դեսպան միրզա Մալքոմ խանն էր»։

«Մալքոմ խանը,—գրում է նա,—անվախ ու համարձակ կերպով բազմաթիվ հեռագրեր ուղարկեց մեծ վեզիրին, արտաքին գործերի մինիստրությանն ու կառավարությանը՝ տեղեկացնելով նրանց այդ պարտքի վտանգների մասին։ Նա միաժամանակ պարտքի քաղաքական և

---

24 Նույն տեղում, էջ 132։

25 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۲۳۵

26 احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران صفحه ۱۰

տնտեսական վնասների մասին հոդվածներ հրատարակեց Անգլիայի և Ֆրանսիայի մեծատիրաժ թերթերում»[27]։

Հենվելով Մոսթոֆի օլ Մամալեքի վկայությանը, Մալեք զադեն գրում է, որ պարտքը վերցնող Աթաբեկը հետագայում Շվեյցարիայում հանդիպում է Մալքոմ խանին, հրավիրում է իր մոտ և արդարանալու համար նրան աշխատում է հավատացնել, որ այդ գործում ոչ մի մասնակցություն և որևէ օգուտ չի ունեցել։ Միրզա Մալքոմ խանը, սակայն, պատասխանում է. «Ես մինչև հիմա Ձեզ արժանի էի համարում հարյուր մտրակի, որովհետև կարծում էի, թե երկրին ու ժողովրդին դավաճանելու դիմաց առնվազն պատճաշ բաժին եք ստացել։ Հիմա, որ ասում եք, թե այդ գործից որևէ օգուտ չեք ունեցել և բացի վիրավորանքից ուրիշ բան ձեզ չի հասել, ձեզ արժանի եմ համարում հազար մտրակի»[28]։

Մալքոմը, ըստ երևույթին, ակնարկում է, որ, եթե Աթաբեկը կաշառքի դիմաց է նման դավաճանության դիմել, ապա արժանի է պատժի, իսկ եթե հայրենիքին դավաճանել է իր համոզմունքներից ելնելով, ապա պատժի չափը, բնականաբար, մեծանում է։

«Երբ որևէ մեկը,—գրում է Մալքոմը,—Իրանի վիճակը համեմատում է Եվրոպայի հետ՝ խորապես ապշում է, թե մեր պետության ղեկավարները ինչպես են կարողացել բնական բարիքներով այնքան հարուստ երկիրը նման թշվառության հասցնել»[29]։

Դատապարտելով երկրի ղեկավարների՝ Իրանի պատմական փառավոր անցյալը բոլոր շարիքների պատնեշ համարելու և նրանով քողարկվելու փորձերը, ինչպես նաև Իրանի հետագա անձեռնամխելիության նկատմամբ նրանց վստահությունը, Մալքոմը գրում է. «.... Նուշիրվանի օրոք Անգլիա չկար։ Բայց այժմ մի քանի անգլիացի առևտրականներ իրենց տանը նստած, և հենց ձեր կողմից բացառվող միջոցներով, հինգ հազար ֆարսախ հեռավորությունից ստրկության մեջ են պահում Նուշիրվանի պետությունից տաս անգամ ավելի մեծ մի երկիր (նկատի ունի Հնդկաստանը—Հ. Ե.)[30]։

«Զարգացման աղբյուրը, շեյխը և վեզիրը» գրքում Մալքոմ խանը անդրադառնում է նաև Արևելքի ժողովուրդների հետամնացության հար-

---

[27] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸ صفحه ۱۰۷

[28] Նույն տեղում, էջ 158։

[29] مجموعه آثار میرزا ملکم‌خان، تهران ۱۹۲۸ کتابچه غیبی یا دفتر تنظیمات صفحه ۵

[30] Նույն տեղում, էջ 9։

ցին, միանգամայն հրաժարվելով նրա բավական տարածված ռասայական պատճառաբանությունից։

«Մի՞թե մարդ անպայման պետք է ծնվի Սենայի կամ Թեմզայի ափերին, որպեսզի ընդունակ լինի զարգանալու և հատուկ իրավունք ունենա յուրացնելու լուսավորությունն ու գիտությունները։ Եթե մարդ ծնվել է Աֆրիկայում կամ Ասիայում, ապա մի՞թե նա պետք է դասվի ոչ լիարժեքների շարքը»[31]։

Բարեփոխումների իր ծրագրի պրոպագանդման հետ մեկտեղ Մալքոմը լայն պայքար էր ծավալում նաև օտարերկրյա պարտքերի դեմ։ Պարտք վերցնելու բանակցությունների ժամանակ Մալքոմը արտաքին գործերի մինիստրությանն է ուղարկում բողոքի մի նամակ, որն իր ժամանակին տպագրվել է նաև մամուլում։

Նամակում Մալքոմը գրում է. «Լսել եմ, որ Թեհրանի ղեկավարները մտադիր են նոր պարտք վերցնել։ Պետք է խուսափել այդպիսի սարսափելի սխալի կրկնությունից», քանի որ այն «ազգային աղետ կլինի»[32]։

Մոզաֆար էդ Դին շահի եվրոպական երրորդ ճանապարհորդության ժամանակ, Մալքոմը «Արդարության ձայնը» վերնագրով մի հոդված է գրում, որն անստորագիր տպագրվում է Կալկաթայի «Հաբլ օլ մաթին» թերթում։ Անդրադառնալով երկրի վիճակին, Մալքոմը գրում է. «... Պետական բոլոր հիմնարկներն անկարգ վիճակում են, գանձարանը դատարկ է, ժողովուրդը սգի մեջ է, անկախության հիմքերը սասանված են։ Ինչ դժբախտություն ասես, որ չի տիրում այս խեղճ հողի վրա։

Այս դրության վերջը ի՞նչ է լինելու։

Խնդիրը պարզ է՝ օտար տերությունները կգրավեն Իրանը։

Ի՞նչ իրավունքով։

Հենց մեր մեղքով, քանի որ մենք չենք ուզում աչք բացել և տեսնել, թե այս դարաշրջանում ինչքան են փոխվել աշխարհը և պետությունների գոյության պայմանները»[33]։

Սա փաստորեն երկրի անկախությունը պաշտպանելու մի կոչ էր՝ ուղղված ժողովրդին։ Մալքոմը զգուշացնում է, որ եթե Իրանում բարեփոխումներ չանցկացվեն, վերջիվերջո, օտար պետությունները երկիրը կնվաճեն։

---

31 ۱۹.۷ مجموعه اثار میرزا ملکم‌خان مبده ترقی و شیخ و وزیر تغلبس صفحه ۲

32 Նույն տեղում, էջ 190։

33 Նույն տեղում, էջ 198։

Սկսած 1890 թ. մոտ երեք ու կես տարի Մալքոմը Լոնդոնում հրատարակում էր «Ղանոն» թերթը, որն Իրանում խիստ արգելված էր։

Թերթը պարունակում է բավական հարուստ նյութ, որի ուսումնասիրումը շատ կարևոր է Մալքոմի քաղաքական հայացքները և հետապնդած նպատակները պարզաբանելու համար։

«Ղանոն» թերթի երկրորդ համարում Մալքոմը գրում է. «Օտարերկրյա ներկայացուցիչներն Իրանից ուղարկած իրենց գաղտնի կամ բացահայտ զեկուցագրերում անընդհատ կրկնում են, որ Իրանի ժողովուրդը, հատկապես զինվորականությունը, իր երկրի վիճակից այնքան է ձանձրացել և այնպես է այն ատում, որ ոչ մի օտար թշնամու դեմ թեկուզ մեկ գնդակ էլ չի արձակի, այլ, ընդհակառակը, դրսից եկող որևէ բանակի ուրախությամբ և շնորհակալությամբ կընդառաջի։

Մեր գեներալներից մեկը լսելով այս խոսքերը, գրել է. «Ասված վկա, օտարերկրյա ներկայացուցիչները ճիշտ են հասկացել՝ Իրանի զորքը ինչո՞ւ և հանուն ինչի՞ պետք է կռվի»[34]։

Մալքոմն, այսպիսով, փաստորեն արտահայտում է հայրենասիրության իր ըմբռնումը. պետք է սիրել և պաշտպանել հայրենիքը, բայց ոչ նրա նեխած հասարակարգը։ Նա, միաժամանակ, կարծես նախազգում է, որ իշխող խավերի դավաճանական քաղաքականությունը վերջիվերջո երկիրը կգցի օտարերկրացիների ձեռքը, և որ ժողովուրդը հանուն հայրենիքի երբեք չի պաշտպանի իշխող խավերին։

Մալքոմը համեմատության մեջ է դնում Իրանի առկա վիճակը նրա պատմական անցյալի հետ և ցույց է տալիս այն նվաստացուցիչ վիճակը, որի մեջ գտնվում է Իրանի ժողովուրդը։

«Աշխարհում քիչ պետություններ կան,—գրում է նա,—որ Իրանի ներկա կառավարության չափ ստորացած և նվաստացած լինեն։ Այս դժբախտ պետությունը, որը մի ժամանակ մարդկության պարծանքներից էր, մեր դարաշրջանում իր նախկին վեհությունից այնպես է իջել, որ նրա ղեկավարները Ջամշիդի թագավորական պալատը վերածել են աճուրդի մեծ շուկայի՝ վաճառելով պետության պաշտոնները, շքանշաններն ու կոչումները։ Նահանգապետությունները, դեսպանությունները և մինիստրությունները ծախեցին ամեն տեսակ ապիկար մարդկանց, ծախեցին գետերը, հանքերը, երկրամասերը և սահմանները, շատ ցածր գնով վաճառեցին ժողովրդի իրավունքները, երկրի առևտուրը և պետության անկախությունը»[35]։

---

[34] «قانون» نمره ۲ صفحه ۱

[35] «قانون» نمره ۲ صفحه ۲

Վերը բերված տողերում Մալքոմը փորձում է վերլուծել անցյալում հզոր և բարձր մշակույթ ունեցող երկրի հետամնացության պատճառները։ Նա դրա հիմքում տեսնում է երկրում տիրող անիշխանությունը, ղեկավարների հայրենադավությունը, ստորությունն ու կաշառակերությունը։

Թերթի էջերում Մալքոմը հատուկ ուշադրություն է դարձնում օտարերկրյա կոնցեսիաների հարցին, մերկացնում իշխող խավերի դավաճանական քաղաքականությունը և լուսաբանում Իրանի համար կոնցեսիաների կործանիչ նշանակությունը։

Թերթի 6-րդ համարում Մալքոմը գրում է. «Չկա՞ արդյոք մեկը, որ հարցնի այս երիտասարդից (նկատի ունի Ամին էս Սոլթանին—Հ. Ե.), թե ո՞ր օրենքով ես դու մեր պետության այս իրավունքները և արտոնությունները ծախում օտար արկածախնդիրներին։ Իսլամի սուրբ օրենքի և բոլոր պետությունների օրենքների համաձայն այս միջոցները և առևտրական գործարքները մեր երկրի ժողովրդի օրինական սեփականությունն են։ Դրանք մեր գոյության միջոցներն ու հիմքն են։ Ինչպե՞ս ես համարձակվում օտարներին ծախել մուսուլմանների գոյամիջոցները։ Արդյո՞ք Իրանի ժողովուրդը իսկապես մահացել է, որ դուք նրա ժառանգությունը աճուրդի եք հանում»[36]։

Այսպիսի հարցադրումից հետո Թերթն իր կողմից պատասխանում է. «Հարգելի պարոն օտարերկրացիները իրավունք ունեն մեզ անկենդան համարել... Եթե այս երկրում մարդկանց մեջ կենդանի ջղեր մնացած լինեն, ո՞ր պատվարժան վեզիրը կկարողանար այսպիսի ստոր և նենգ բեռ պարտադրել ժողովրդին և այսքան հանդուգն լինել»[37]։

Այս խոսքերը փաստորեն ժողովրդին կոչ են անում կառավարության դավաճանական քաղաքականության նկատմամբ անտարբեր չմնալ և ոտքի ելնել հանուն իրենց իրավունքների։

Մալքոմը խստորեն բողոքում է նաև կառավարության ներքին ու արտաքին քաղաքականության դեմ։ Թերթի 15-րդ համարում տպագրվել է Թեհրանից ստացված հետևյալ թղթակցությունը։ «Ինչ մեծածավալ կալվածք ունեինք, բռնագրավեցին և ավերեցին։ Ինչ կուտակած հարստություն ունեինք, բոլորը հարկերի կամ փեշքաշի կարգով կապալի հարվածով մեզանից վերցրին։ Ինչքան խիզախ երիտասարդներ ունեինք, տարան բանակ և Իրանը ավերելու գործիք դարձրին։ Աֆղաններից պարտվեցին, անգլիացիներից պարտվեցին, ռուսների մատի

---

[36] "قانون" نمره ٦ صفحه ٢

[37] "قانون" نمره ٦

մեկ շարժումով ամբողջ Խորասանը և սրբավայրերը հանձնեցին։ Այս ժողովրդի ապրուստի բոլոր միջոցները, ինչպես հանքերը, ճանապարհները, վարուցանքն ու առևտուրը, հեռադիրը, գործարանները, բոլորը օտարներին ծախեցին»[38]։

Մալքոմը մեծ հավատով էր լցված դեպի ժողովուրդը, և նրա մեջ էր տեսնում այն հզոր ուժը, որն ընդունակ է փոխել երկրում ստեղծված դրությունը, վերջ դնել անսահմանափակ միապետությանն ու օտարերկրյա տիրապետությանը։ «...Ժողովուրդն իր ապահովության միջոցները պետք է անպայման ինքը ձեռք բերի»,—գրում է նա[39]։

Հսկայական է եղել «Ղանուն» թերթի դերը իրանական հասարակության զարթոնքի գործում։

«Ղանուն» թերթը և նրա հրատարակիչը,—գրում է Մալեք զադեն,—պետք է ճանաչվեն որպես Իրանի առաջադիմության առաջնորդներ։ Նրանք պետք է համարվեն սահմանադրական շարժման առաջացման և Իրանի ժողովրդին ստրկության կապանքներից ազատագրելու կարևոր գործոն։ Իրանի սահմանադրության պատմությունն իր էջերում երախտագիտությամբ և հարգանքով պետք է արձանագրի միրզա Մալքոմ խանի անունը և նրա երկերը»[40]։

* *
*

Իրանում կապիտալիստական երկրների ազդեցության ուժեղացմամբ է՛լ ավելի սրվեց գաղափարական պայքարը երկրի ներսում։ Հատկապես լայն տարածում գտավ պանիսլամիզմը, որը հանդիսանում էր ֆեոդալ-կալվածատիրական դասակարգի գաղափարախոսությունը։ Պանիսլամիզմի գաղափարախոսության հիմնական ուղղությունն այս էտապում պայքարն էր օտարերկրյա կապիտալի դեմ։ Բայց նա, միաժամանակ, հանդես էր գալիս նաև իր դարն ապրած, սակայն դեռևս գոյություն ունեցող ֆեոդալական կարգերի պաշտպանի և, ընդհանրապես, նորագույն քաղաքակրթության, գիտության և մշակույթի զարգացումը խանգարողի դերում։

Խոսելով պանիսլամիստների հետապնդած նպատակների մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Նրանք փորձում են եվրոպական և ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված ազատագրական շարժումը միացնել խա-

---

38 قانون، نمره ۱۵ صفحه ۴

39 قانون، نمره ۱۶ صفحه ۳

40 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۲۴۳

ների, կալվածատերերի, մոլլաների և նմանների դիրքի ամրացման հետ»։

Մենք այստեղ կանգ կառնենք միայն պանիսլամիզմի օտարերկրյա տիրապետության դեմ մղած պայքարին։

Հենց սկզբից անհրաժեշտ է նշել, որ օտարերկրյա կապիտալի դեմ պանսիլամիստների պայքարը, չնայած արտաքնապես հրապուրիչ էր և գրավում էր լայն մասսաների, սակայն չէր տանում դեպի օտարերկրրյա լծի վերջնական թոթափում։

Պանիսլամիզմի գլխավոր գաղափարախոսը համարվում էր սեյեդ Ջամալ էդ Դին Աֆղանին։ Նա մոլեռանդորեն պայքարում էր իմպերիալիզմի դեմ և նշանակալի ազդեցություն ուներ ժողովրդական զանգվածների վրա։

Սեյեդ Ջամալ էդ Դին Ասադաբադի (Աֆղանի) կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություններ են գրել պարսիկ, անգլիացի, ֆրանսիացի և բազմաթիվ այլ հեղինակներ։ Սակայն պետք է ասել, որ այդ աշխատությունները հաճախ սուբյեկտիվ են և չափազանցություններով լի։ Նրանք մեծ մասամբ շրջանցել են կարևոր և էական հարցերը, իսկ երկրորդական ու աննշան փաստերը ընդգծել կամ ուռճացրել։ Հակասական են նաև նրան տրված գնահատականները։ Ինչպես նշում է խան Մալեք Սասանին, Ջամալ էդ Դինի կողմնակիցները նրան համարում էին Արևելքի ամենախոշոր փիլիսոփան և հայրենասերը, իսկ հակառակորդները՝ վտանգավոր խռովարար[42]։

«Սեյեդ Ջամալ էդ Դին Աֆղանիի կյանքն ու հասարակական, քաղաքական փիլիսոփայությունը» աշխատության հեղինակ Զահարդեհին գրում է, որ Եգիպտոսի ազատասերները Ջամալ էդ Դինից խնդրեցին կազմել Եգիպտոսի Ազգային ժողովի ընտրությունների կանոնադրությունը, որի հիման վրա ժողովուրդը կարողանար ընտրել իր ներկայացուցիչներին։ Ջամալ էդ Դինը, պատասխանելով այս առաջարկին, ասում է. «Ազգային ժողովն այն ժամանակ կարող է իրենից իսկական ուժ ներկայացնել, երբ կազմված լինի ժողովրդի ոգին արտահայտող ներկայացուցիչներից։ Փաշայի, ամիրի կամ օտար տերության միջոցով գումարված ազգային ժողովն անիմաստ կլինի և կենթարկվի իր ստեղծողների կամքին... ազգային ամենամեծ իդեալը օտարների ճիրաններից և ստրկությունից ազատվելն է»[43]։

---

41 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 171։

42 خان ملك ساسانى، سياستگران دوره قاجار تهران ۱۹٦۰ صفحه ۱۸٦

43 مرتضى چهاردهى، زندگانى و فلسفه اجتماعى و سياسى جمال‌الدين افغانى تهران ۱۳۳۴ صفحه ۳

Ջամալ էդ Դինը որոշ ժամանակ շրջագայել է Հնդկաստանում, որտեղից և վտարվել է իշխանությունների մտավախության պատճառով։ Հնդկաստանում իր ելույթներից մեկում դիմելով հնդիկ ժողովրդին, նա ասում է. «Եթե դուք հարյուր միլիոնավոր մոծակներ դառնաք և կառավարության ականջին տզզաք, ապա ձայնը կհասնի նրանց ղեկավար Անգլիայի պրեմիեր Գլադստոնի ականջը։ Եթե դուք՝ հարյուր միլիոնավոր հնդիկներ, միասնական լինեք, ամենակարող աստվածը ձեզ կրիա կդարձնի և դուք Մեծ Բրիտանիայի կղզիներում կսուզվեք և Հնդկաստանում գլուխ կհանեք՝ որպես ազատ մարդիկ»[44]։

Ջամալ էդ Դինը, փաստորեն, ժողովրդին կոչ է անում միավորել ուժերը և պայքարի դուրս գալ օտարերկրյա գաղութարարների դեմ՝ չկասկածելով այդ պայքարի հաջողությանը։

Ջամալ էդ Դինի համախոհները և աշակերտները հանդես էին գալիս Մերձավոր արևելքում իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը քննադատող հոդվածներով, որոնց թարգմանություններն ուղարկում էին նաև անգլիական թերթերին։ Այս հանգամանքը չվրիպեց Գլադստոնի ուշադրությունից և նա հանձնարարեց Եգիպտոսում անգլիական գլխավոր հյուպատոսին հսկողության տակ վերցնել Ջամալ էդ Դինի գործունեությունը։ Դրանից հետո Ջամալ էդ Դինը աքսորվեց նաև Եգիպտոսից։

Նա Փարիզում հրատարակում է «Օրուց օլ ոսղա» թերթը (լույս է տեսել ընդամենը տասնութ համար)։ Այն տարածվում էր Աֆղանստանում, Հնդկաստանում, Թուրքիայում, Եգիպտոսում, Սուդանում, Իրաքում, Սիրիայում, Հեջազում, Եմենում, Մարոկկոյում, Ալժիրում և, որոշ աղբյուրների վկայությամբ, մեծ հեղինակություն էր վայելում։

Այդ թերթում տպագրված հոդվածներից մեկում Ջամալ էդ Դինը գրում է. «Իսկապես զարմանալի է, թե համաշխարհային խոշոր քաղաքագետները ինչպիսի՞ վարքագիծ ունեն, ի՞նչ որոշումներ են կայացնում ու ի՞նչ եզրակացությունների հանգում, որ մարդկությանը դեպի ոչնչացում են տանում։ Մերձավոր արևելքի խավարամիտ ժողովուրդները ... մի օր պետք է խորը քնից արթնանան և իսլամի հզորության վերածննդի համար զոհաբերություններ կատարեն»[45]։ Որոշ աղբյուրներ վկայում են, որ երբ Սուդանում ապստամբություն ծագեց, Սոլզբերին Ջամալ էդ Դինին առաջարկեց Սուդանի թագավոր կարգվել, որպեսզի ճնշի Մեհդիի գլխավորած ապստամբությունը, իրականացնի Անգլիայի նախատեսած բարեփոխումները։

---

[44] Նույն տեղում, էջ 14։

[45] Նույն տեղում, էջ 39։

Ջամալ էդ Դինը այդ առաջարկը կտրականապես մերժեց, ասելով. «Եթե Բրիտանիան կողմնակից է բարեփոխումների և մտադիր է ինչ գնով էլ լինի ժողովրդի բարեկեցության ուղղությամբ քայլերի դիմել, ապա ավելի լավ է ուշադրություն դարձնի Իռլանդիայի վրա, որը ձեզ ավելի մոտ է և ձեր ու իռլանդացիների միջև ընդհանուր գծեր կան, մի բան, որ բացակայում է ձեր և Եգիպտոսի, Սուդանի և Մերձավոր արևելքի մյուս երկրների միջև»[46]։

1889 թ. Ջամալ էդ Դինը Եվրոպայից վերադառնում է Իրան, և այնտեղ լայն գործունեություն ծավալում։ Նա ոչ միայն, ինչպես առաջին ճամփորդության ժամանակ, ժողովրդին քարոզում է դեմ դուրս դալ բռնապետությանը և սահմանադրություն հաստատել, այլև մուսուլմաններին կոչ է անում միասնական պայքարի ելնել ընդդեմ եվրոպացիների։ Պատահական չէ, որ նրան շուտով արտաքսում են նաև Իրանից։

Ջահարդահին գրում է, որ Ջամալ էդ Դինի քաղաքական պայքարի նպատակն էր արթնացնել և ոտքի հանել Արևելքի ժողովուրդներին, որպեսզի նրանք զգան արևմտյան պետությունների կողմից սպառնացող վտանգը, զգաստանան և իրենց իշխանությունները սահմանադրական հիմքի վրա կառուցեն[47]։

Ջամալ էդ Դինի քաղաքական հայացքները պարզաբանելու համար կարելի է բերել նաև նրա հետևյալ տեսակետները։

Արևելքի երկրների գաղութացման պատճառը Ջամալ էդ Դինը համարում էր այդ երկրների հսկայական հարստությունները և նրանց աշխարհագրական կարևոր դիրքը։ Նա գտնում էր, որ արևելքցիների պարտքն է օտարերկրացիներին հասկացնել տալ, որ այդ երկրներում ձեռք բերված հարստությունն ու բարիքը պետք է հենց այդ երկրներում օգտագործվեն[48]։

Ջամալ էդ Դինը հնդիկ տարբեր խավերին (հոգևորականներին, առևտրականներին և նույնիսկ հողագործներին) կոչ էր անում միավորվել և համատեղ միջոցներ ձեռնարկել՝ բարձրագույն ու տարրական դպրոցներում ուսուցումը հնդկերեն լեզվով անցկացնելու համար։

Պատասխանելով նրանց, ովքեր արդարացնում էին Հնդկաստանում անգլերեն լեզվի տարածումը, պատճառաբանելով այն գիտության տարբեր բնագավառներում անգլիացիների խոշոր ներդրումով, անգլերեն լեզվով հարուստ գրականության առկայությամբ, ինչպես նաև Հնդ-

---

46 Նույն տեղում, էջ 40։
47 Նույն տեղում, էջ 91։
48 Նույն տեղում, էջ 129։

կաստանին երկար տարիներ տիրապետող Անգլիային ընդհանրապես ենթարկվելու անհրաժեշտությամբ, Ջամալ էդ Դինը դրում է. «Արդյոք հնդիկներին սազակա՞ն է, որ օտարերկրյա գերիշխողներից օգուտներ ստանալու համար իրենց ծագումը մոռանան, գոյության երաշխիքներից հրաժարվեն, գիտությունն ու լուսավորությունն ուսուցանեն հաղթող ազգի լեզվով, այդ լեզուն գերադասեն ազգային լեզվից և օգտագործեն նրա փոխարեն[49]։

Անդրադառնալով աշխարհի վերաբաժանման համար իմպերիալիստական պետությունների միջև մղվող պայքարին և, մասնավորապես, Հնդկաստանում Անգլիայի գերիշխանությանը, Ջամալ էդ Դինը, այնուամենայնիվ, համոզմունք է հայտնում, որ անգլիացիներին չի հաջողվի Հնդկաստանը սեփականացնել։ «Հնդիկների ու անգլիացիների միջև բարեկամական հարաբերություններ կհաստատվեն միայն այն ժամանակ,— գրում է նա,—երբ հնդկերենը կդառնա երկրի պաշտոնական լեզուն, գաղութարարների արտոնությունները կվերացվեն, հնդիկներն իրավունքներ կստանան, կներկայացվեն պառլամենտում, երկրում կտարածվի գիտությունն ու լուսավորությունը, դպրոցներում ուսուցումը կիրականացվի մայրենի լեզվով, արդյունաբերության և գյուղատնտեսության համար բարձրագույն դպրոցներ կհիմնվեն, կարճ ասած, անգլիացիները հնդիկներին այն աչքով կնայեն, ինչ իրենց են նայում և բոլոր տարբերությունները և արտոնությունները կվերացվեն»[50]։

Մեկ այլ հոդվածում զայրույթով հիշատակելով օտարերկրյա ազդեցության ուժեղացման հանգամանքը և թվարկելով օտար տերությունների կողմից զավթված մուսուլմանական երկրները, Ջամալ էդ Դինը նշում է, որ վտանգ է սպառնում նաև դեռևս որևէ պետության ենթակայության տակ չգտնվող մուսուլմանական փոքրաթիվ երկրների անկախությանը։ Մասնավորապես Իրանում օտարերկրյա ներթափանցման սաստկացման մեջ Ջամալ էդ Դինը մեղադրում էր Նասր էդ Դին շահին, որը ոչ միայն չէր պայքարում օտար տերությունների ոտնձգությունների դեմ, այլև նպաստում էր նրանց քաղաքականության իրականացմանը։

«Ջիա օլ խաֆեղին» թերթում 1891 թ. Ջամալ էդ Դինը հրապարակում է շիա ղեկավար հոգևորականներին ուղված մի նամակ, որով պահանջում է Նասր էդ Դին շահի գահընկեցությունը[51]։

---

49 مرتضی مدرسی چهاردهی، آراء و معتقدات سیدجمال‌الدین افغانی تهران ۱۳۳۷ صفحه ۱۴۶

50 Նույն տեղում, էջ 149—150։

51 خان ملك ساسانی، سیاستگران دوره قاجار تهران ۱۹۶۰ صفحه ۱۹۳

1892 թ. մարտի 1-ին հրապարակված մի այլ հոդվածում Ջամալ էդ Դինը բարձր հոգևորականությանը կրկին կոչ է անում գահընկեց անել շահին։ Նա մատնանշում է, որ շահը հոգևորականության իրավունքներն ու ազդեցությունը աստիճանաբար սահմանափակելու, ինչպես նաև ժողովրդին հարստահարելու և ստրկացնելու միջոցով կարողացավ ապահովել իր միահեծան իշխանությունը։ Երկրում տիրող այդ վիճակը, միաժամանակ, հնարավորություն տվեց եվրոպացիներին, առանց դիմադրության հանդիպելու, ներթափանցել Իրան և հաստատել իրենց տիրապետությունը։

Ջամալ էդ Դինը զգուշացնում է հոգևորականությանը, որ եթե նրանք չշտապեն շահին գահընկեց անել, ապա այլևս ուշ կլինի դրությունը փրկել[52]։

Ջամալ էդ Դինը գտնում էր, որ մինչև ժողովուրդները, հատկապես մուսուլմանները, բռնության և ստրկության շղթաները չփշրեն և ժողովրդական իշխանություն չհաստատեն, դուրս չեն գա վերելքի ու զարգացման ուղի և չեն ազատագրվի օտարերկրյա ազդեցությունից[53]։

Զահարդեհին, անդրադառնալով Ջամալ էդ Դինի տեսակետներին, հատկապես նշում է, որ նա մուսուլմանական աշխարհի փրկության միակ ուղին տեսնում էր մուսուլմանական ժողովուրդների միասնության և գաղութակալության մեքենայություններն ու դիտավորությունները միացյալ ուժերով կասեցնելու մեջ[54]։

Ջամալ էդ Դինի՝ Զահարդեհիի գրքում մեջբերված որոշ դատողությունները վկայում են, որ նա չի հավատում օտարերկրյա նվաճողների մարդկային խղճին կամ նրանց համոզելու հնարավորությանը, այլ դիմում է ժողովուրդներին ու պահանջում, որ նրանք ոտքի ելնեն ու բռնի ուժով թոթափեն օտարերկրացիների լուծը։

Սեյեդ Ջամալ էդ Դինի հակաիմպերիալիստական գործունեության մասին հետաքրքիր փաստեր է հաղորդում նաև «Իրանցիների զարթոնքի պատմությունը» աշխատության հեղինակ Նազեմ օլ Էսլամ Քերմանին։ Նա գրում է, որ Ջամալ էդ Դինի գործունեությունը չէր սահմանափակվում Իրանով, որ նա ակտիվորեն միջամտում էր նաև միջազգային քաղաքական կյանքին։ Երբ անգլիացիները օկուպացրին Եգիպտոսը

---

52 Նույն տեղում, էջ 24—26։

53 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۱۹۲

54 مرتضی مدرسی چهاردهی، آراء و معتقدات سیدجمال‌الدین افغانی تهران ۱۳۲۷ صفحه ۲۸

և ոչնչացրին նրա անկախությունը, Ջամալ էդ Դինը հանդես եկավ որպես Եգիպտոսի անկախության պաշտպան։ Նա մեծ ատելություն էր տածում անգլիացիների նկատմամբ, բուռն պայքար էր ծավալել նրանց դեմ և անգլերեն լեզվով մերկացնող հոդվածներ էր տպագրում թերթերում»[55]։

«Ալ Մանար» թերթի խմբագիր սեյեդ Մոհամադ Ռաշիդը հրապարակել է Ջամալ էդ Դինի գրչին պատկանող երեք արժեքավոր փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե որքան մեծ է եղել նրա ազդեցությունը Իրանում տեղի ունեցած իրադարձությունների վրա։ Առաջին նամակը ուղղված է Սամարայի գլխավոր մոջթահեդներից հաջ միրզա Հասան Շիրազիին, որով նա պահանջում էր ծխախոտի կոնցեսիայի դեմ միջոցներ ձեռնարկել և ժողովրդական կամ ազգային կուսակցությանը միանալ։

1891 թ. գլխավոր մոջթահեդին գրած այս նամակում Ջամալ էդ Դինը անդրադառնում է երկրում տիրող վիճակին, հատկապես շեշտելով Իրանի ժողովրդական զանգվածների դժգոհությունն ու զայրույթը իրենց հայրենիքը ստրկացնող այդ նոր գործարքի կապակցությամբ։ Նա, այնուհետև, դատապարտում է ջահին, որն Իրանի թշնամիներին է վաճառել նրա եկամուտները՝ հանքերը, ճանապարհները, այգիները, դաշտերը... ծխախոտը և նրա ցանքերը..., օտարերկրացիներին է հանձնել նաև բանկը, որը նշանակում է կառավարության ղեկը տալ ուրիշներին, և ժողովրդին ստրկացնել...։

Անդրադառնալով 1889 թ. Դոլգոռուկիին տրված կոնցեսիային, Ջամալ էդ Դինը նշում է, որ դրանով Ռուսաստանին տրվեց այն ամենը, ինչ մնացել էր երկրից։ «Կարճ ասած,—գրում է նա,—ոճրագործները Իրանի նահանգները աճուրդի են դրել մեծ պետությունների միջև, այն էլ այդպիսի չնչին գումարի դիմաց»։

Այնուհետև Ջամալ էդ Դինը կոչ է անում մոջթահեդին՝ ղեկավարել օտարերկրացիների դեմ ժողովրդական պայքարը[56]։

Ջամալ էդ Դինի ջանքերը զուր չանցան։ Ամենայն հավանականությամբ նրա այդ նամակը մեծ դեր խաղաց մոջթահեդի կողմից ֆեթվայի հրապարակման գործում, որով մինչև ծխախոտի կոնցեսիայի բեկանումը ծխախոտի գործածությունը հայտարարվեց օրենքից դուրս։ Եվ, ի

---

55 قاظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان مجلد اول تهران صفحه ۵۸

56 *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909, Cambridge, 1910, p. 2.

վերջո, նասր էդ Դին շահը, Ամին էս Սուլթանը, օտար պետությունները և ժխախոտի կոնցեսիայի տերերը ստիպված եղան տեղի տալ։

Սեյեդ Ջամալ էդ Դինը, անկասկած, XIX դարի Իրանի խոշոր գործիչներից է, որի աշխարհայացքն ու գործունեությունը շատ բարդ է ու հակասական։

Г. М. ЕГАНЯН

БОРЬБА ИРАНСКИХ ПРОСВЕТИТЕЛЕЙ ПРОТИВ КОЛОНИАЛЬНОЙ ПОЛИТИКИ ИНОСТРАННОГО ИМПЕРИАЛИЗМА

Резюме

Просветительское движение в Иране особенно большой размах получило во второй половине XIX в. Безусловно, это явление имело свои особенности, обусловленные характером политико-экономической жизни страны.

Общественно-политическая деятельность просветителей своим острием была направлена также против колониальной политики империалистических стран в Иране и господствующих слоев, которые своей деятельностью всячески способствовали осуществлению этой политики.

Наиболее видные представители просветительского движения—Талибов, Зейн оль-Абедин Марагеи, Малек оль-Мотакалемин, Мирза-Мальком хан и др. В статье подробно освещаются антиимпериалистические идеи просветителей и прослеживается процесс их борьбы против колониальной политики империалистических стран.